

Տեղեկանք

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության մասով ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 2018 թվականի իրականացման տարեկան արդյունքների մասին

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ					
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5	6
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Հավելված N1 Կետ 216	Մարզպետարանների լիազորությունների սահմանում, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների շարքում մարզպետարանների նախատեսում	«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Տարածքային կառավարման մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի լրամշակված տարբերակների փաթեթ (այսուհետ Փաթեթ) 26.11.2018թ. N 03/15.1/9353-18 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ: Վարչապետի 06.11.2018թ. N02/24.12/37643-18 հանձնարարականի համաձայն՝ Փաթեթը պետք է համաձայնեցվեր	

				Երևանի քաղաքապետարանի հետ: Փաթեթի վերջնական տարբերակը Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանձնարարականով սահմանված ժամկետում՝ 09.01.2019թ. N01/15/61-19 գրությամբ:	
Հավելված N1 Կետ 217	Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի նոր ցանկի հաստատում, Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի կողավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրում և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցուցակների թվայնացում և տեղադրում համացանցում	1. Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի լրամշակումը.	Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 28.09.2018 թվականի N 01/21/7683-18 գրությամբ		
		2.1. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի կողավորված հաշվառման համակարգի տեխնիկական բնութագրի կազմում և համակարգչային ծրագրի մշակում: <<Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի կողավորված հաշվառման	Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 29.06.2018 թվականի N 01/21/4351-18 գրությունով		

		<p>տեղեկատվական շտեմարանում տվյալների ընդգրկման և շտեմարանի վարման կարգը սահմանելու մասին&gt;&gt;</p> <p>Հայաստանի ազգային արխիվի տնօրենի իրավական ակտի ընդունում</p>		
		<p>2.2. Անհրաժեշտ սարքավորումների գնման կազմակերպում:</p> <p>Հայաստանի ազգային արխիվի աշխատակիցների մասնագիտական ուսուցում</p>	<p>Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել 28.09.2018 թվականի N 01/21/7724-18 գրությունով</p>	
		<p>2.3. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստա-թղթերի կողավորված հաշվառման համակարգի սարքավորում-ների տեղադրում, ներքին ցանցի ստեղծում, համակարգի գործարկում</p>	<p>Միջոցառման կատարման ժամկետը սահմանված է 2019-2022թթ:</p>	

			3.1. Ցուցակների արդի պահանջներին համապատասխան խմբագրում	Միջոցառման կատարման ժամկետը սահմանված է 2019-2022թթ:	
			3.2. Ցուցակների«PDF»տարբերակներիստեղծում,	Միջոցառման կատարման ժամկետը սահմանված է 2019-2022թթ:	
			3.3. Ցուցակների տեղադրում <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի կայքէջում	Միջոցառման կատարման ժամկետը սահմանված է 2019-2022թթ:	
Հավելված N1 Կետ 218	Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման ուղղությունների նախանշում	«Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացնելը	Մշակվել և 2018 թվականի նոյեմբերի 20-ի N 03/17.2/9214-18 գրությամբ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:		
				«Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման	

				<p>նախագծի մշակումը պայմանավորված է համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի զարգացման ուղղությունների հստակեցմամբ և դրանց կիրառմամբ համայնքային ծառայողներին մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների փոխանցման գործընթացի արդյունավետության բարելավմամբ:</p> <p>Իրավական ակտի կիրառման դեպքում համայնքային ծառայողների վերապատրաստման միջոցով կիրականացվի համայնքային ծառայողների կոնկրետ մասնագիտական կարողությունների կատարելագործում, ինչը կապահովի համայնքների զարգացման ռազմավարական խնդիրների արդյունավետ իրականացումը:</p>	
<p>Հավելված N1 Կետ 219</p>	<p>Տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող օրենսդրության կատարելագործում</p>	<p>1. Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հ. օրենքի նախագիծը</p>	<p>Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացվել է 2018թ. նոյեմբերի 20-ին: 2018թ. դեկտեմբերի 12-ին ստացվել է ՀՀ վարչապետի հանձնարարական առ այն, որ նախագծային փաթեթը</p>		

			ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ներկայացվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններից հետո կազմավորվելիք ՀՀ կառավարության քննարկմանը:	
			2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացվել է 2018թ. դեկտեմբերի 3-ին: 2018թ. դեկտեմբերի 10-ին ստացվել է ՀՀ վարչապետի հանձնարարական առ այն, որ նախագծային փաթեթը ներկայացվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններից հետո կազմավորվելիք ՀՀ կառավարության քննարկմանը:	
			3. «Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»  ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջոցառումը կառավարության գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկելիս նկատի է առնվել այն հանգամանքը, որ 2018 թվականի ընթացքում պետք է իրականացվեին համայնքների միավորման ծրագրեր. նախագծի հիմնական շահառուները պետք է հանդիսանային միավորված համայնքները: Սակայն 2018 թվականին նման ծրագրեր չեն իրականացվել:	

				<p>Բացի այդ, ընտրական օրենսգրքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առնչվող իրավակարգավորումների և, մասնավորապես նախագծի վերաբերյալ քննարկումներ ծավալվեցին ս.թ. օգոստոսին վարչապետին առընթեր ընտրական բարեփոխումների հանձնաժողովի մասնակցությամբ կազմակերպված միջոցառման ընթացքում, որտեղ առաջարկվեց առայժմ ձեռնպահ մնալ ընտրական օրենսգրքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առնչվող գլխում փոփոխություններ կատարելուց և հարցին անդրադառնալ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններից հետո: Չնայած այն հանգամանքին, որ «Ընտրական օրենսգրքի սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը պատրաստ էր, վերոգրյալ հիմնավորմամբ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N°1030-L</p>	
--	--	--	--	--	--

				<p>որոշմամբ հաստատված №1 հավելվածի 219.3-րդ կետով նախատեսված ժամկետում այն ՀՀ վարչապետի աշխատակազմ չներկայացվեց, փոխարենը ներկայացվեց շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի №1030-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում էր ուժը կորցրած ճանաչել այդ որոշմամբ հաստատված հավելվածի 219.3-րդ կետը:</p> <p>ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն՝ առաջարկվել է ձեռնպահ մնալ ՀՀ կառավարության 06.09.2018թ. N 1030-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելուց, որից հետո 2018 թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծային փաթեթը:</p>	



<p>Հավելված N1 Կետ 220</p>	<p>ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման ընթացակարգի սահմանում</p>	<p>ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Մշակվել և նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 01/18.2/9743-18 գրությամբ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:</p>	
<p>Հավելված N1 Կետ 221</p>	<p>Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում առկա սանիտարական հանգույցների վիճակի բարելավում</p>	<p>1. Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների գույքագրում, վիճակի ուսումնասիրում, զուգարանների առկա վիճակի և դրանց նկատմամբ օրենսդրությամբ ներկայացված պահանջների</p>	<p>10.10.2018թ. N 01/15.2/8079-18 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:</p>	

			համապատասխանության գնահատում		
			2. Օրենսդրությամբ ներկայացված պահանջների խախտման դեպքերում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման ապահովում	10.10.2018թ. N 01/15.2/8079-18 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	
			3. Հասարակական գուգարանների նկատմամբ օրենսդրությամբ ներկայացված պահանջների ընդլայնման նպատակահարմարության որոշում և, անհրաժեշտության դեպքում, իրավական ակտերի նախագծերի մշակում	26.12.2018թ. N 01/15.2/10273-18 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	
Հավելված N1 Կետ 222	Տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված ծրագրերի	1. Տարածքային համաչափ զարգացմանն ուղղված տարածքային	Տարածքային զարգացման 8 փորձնական ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը 26.12.2018թ. N		

		<p>իրականացման ապահովում</p>	<p>զարգացման 8 փորձնական ծրագրերի իրականացման ապահովում</p>	<p>01/15.2/10274-18 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:          Իրականացման ընթացքում կատարվել են 2 մլն 822.180.4 եվրոյի աշխատանքներ, որից համաֆինանսավորումը կազմում է 474.336.3 եվրո: Ընդհանուր առմամբ նախատեսվում է ստեղծել է թվով 544 նոր աշխատատեղեր:          Աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նախատեսվում է իրականացնել մինչև 2020 թվականը:</p>	
			<p>2. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման համար՝ ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների</p>	<p>2018 թվականի ընթացքում ՀՀ 117 համայնքներից ստացվել և ուսումնասիրվել են թվով 230 սուբվենցիայի հայտ:          Ուսումնասիրության և շահագրգիռ մարմինների հետ քննարկման արդյունքներով՝ վարչապետի 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 136-Ա որոշմամբ ստեղծված սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կայացած թվով 7 նիստերի ընթացքում քննարկվել և հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել 180-ը, որոնց ընդհանուր գումարը կազմում է 6,832 մլրդ ՀՀ դրամ,</p>	

			<p>տրամադրման գործընթացի ապահովում</p>	<p>այդ թվում 3,642 մլրդ ՀՀ դրամը՝ համայնքների ներդրման գումարն է 2,856 մլրդ ՀՀ դրամը՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման գումարը 298,3 մլն ՀՀ դրամը՝ մասնավոր հատվածի ներդրումն է: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ համայնքներում կազմակերպված մրցույթների արդյունքներով և Կառավարության կողմից հաստատված համապատասխան 7 որոշումներով թվով 152 սուբվենցիայի ծրագիր համաֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից 1,620 մլրդ ՀՀ դրամի չափով:</p> <p>Նշված ծրագրերն ուղղված են փողոցների ասֆալտապատմանը, մանկապարտեզների, մշակույթի տների, համայնքային կենտրոնների, երաժշտական դպրոցների կառուցմանն ու վերանորոգմանը, խմելու և ռոտոման ջրագծերի անցկացմանը, էներգախնահող փողոցային լուսավորության անցկացմանը, զբոսայգիների, խաղահրապարակների, հրապարակների, այգիների ստեղծմանն ու բարեկարգմանը, կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը:</p>	
--	--	--	--	--	--

				<p>Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած 180 ծրագրերից 25-ի իրականացումը եղանակային պատճառներով տեղափոխվել է հաջորդ տարի, իսկ 3-ը հրաժարվել են իրականացնել:</p>	
			<p>3. ՀՀ տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով՝ ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային գործարար ծրագրերի առցանց հարթակի (on-line) ստեղծման և դրա կայացման աշխատանքների ապահովում</p>	<p>ՀՀ բոլոր մարզերից հավաքագրվել, ամփոփվել և համապատասխան ձևաչափով պատրաստվել են թվով 150 ներդրումային-գործարար ծրագրային առաջարկներ (հայերեն և անգլերեն լեզուներով): Ուլտրաթույնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ մշակվել և պատրաստվել է Հայաստանի Հանրապետության տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի հարթակը, հարթակում տեղադրվել են 150 ներդրումային-գործարար ծրագրային առաջարկներ (հայերեն և անգլերեն լեզուներով): Ներկայումս քննարկվում են հարթակի անվտանգության և հրապարակման (հոսթինգ և դոմեյն) հետ կապված հարցերը:</p>	

			<p>4. Շարունակել սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերը</p>	<p>Սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ի N01/15.1/10206-18 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:</p>	
			<p>5. Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների մշակում և իրականացում</p>	<p>Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը քննարկվել է Մշտապես գործող տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2018 թվականի նոյեմբերի 16-ի նիստում և քննարկման արդյունքներով նիստի թիվ N 24.9/[491359]-18 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ առաջարկվել է քննարկել որոշման նախագծով ներկայացված միջոցառումները ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության լիազորությունների շրջանակներում իրականացնելու հնարավորության հարցը, և այն</p>	

	<p>Հավելված N1 Կետ 223</p>	<p>Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորում և գործարկում</p>	<p>1. Մարզերի համայնքներից սահմանված ձևաչափին համապատասխան տվյալների հավաքագրում և ներբեռնում</p>	<p>հանվել է քննարկումից:</p> <p>ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրվել և ծրագրում ներբեռնվել են մարզերի խոշորացված և խոշոր համայնքների համապատասխան տվյալները՝ սահմանված ձևաչափին համապատասխան: 21.12.2018թ. N 01/15.1/10080-18 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>	
			<p>2. Համայնքների վարչական տվյալների շտեմարանի էլեկտրոնային ծրագրի գործարկում</p>	<p>ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ մշակվել է էլեկտրոնային ծրագիր, որը անցել է փորձնական գործարկման փուլ: Ներկայումս ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվում է էլեկտրոնային ծրագրի զարգացմանն ուղղված աշխատանքներ:</p> <p>21.12.2018թ. N 01/15.1/10080-18 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>	
			<p>3. Համայնքների վարչական տվյալների շտեմարանի տվյալների</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համապատասխան հանձնարարականով սահմանվել են տվյալների թարմացման</p>	

			<p>պարբերական թարմացում</p>	<p>կիսամյակային և տարեկան պարբերականությունները: Ընդ որում, կիսամյակային տվյալների ներկայացման համար ժամկետ է սահմանվել մինչև տվյալ տարվա օգոստոսի 1-ը, իսկ տարեկան տվյալների համար՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:</p> <p>21.12.2018թ. N 01/15.1/10080-18 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>	
<p>Հավելված N1 Կետ 224</p>	<p>Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում</p>	<p>1. գույքային հարկերի տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծում</p>	<p>Գույքային հարկերի տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծմանն ուղղված աշխատանքները ներառված են ՀՀ վարչապետի 2018 թվականի ապրիլի 9-ի թիվ 362-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից սահմանված ժամկետում իրականացվել են վերոնշյալ ժամանակացույցի 1-ին կետով սահմանված աշխատանքները և «Թվային Հայաստան» հիմնադրամին են ներկայացվել գույքային հարկերի էլեկտրոնային համակարգի արդիականացման հիմնական պահանջները</p>		



				<p>նկարագրող փաստաթղթերը:</p> <p>Սակայն, «Թվային Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2018 թվականի օգոստոսի 20-ին կայացած նիստում որոշում է կայացվել հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու վերաբերյալ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ տվյալների բազայի ստեղծմանն ուղղված աշխատանքների հետագա ընթացքն ապահովելու նպատակով ՏԿԶ նախարարությանը հանձնարարվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել վերոնշյալ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ որոշման նախագիծ: Ներկա դրությամբ ընթացքի մեջ են այդ նախագծի մշակման աշխատանքները:</p>	
			<p>2. 10000 կամ ավելի բնակչություն ունեցող համայնքներում կամ հանրային նշանակության այլ միջոցառումները համացանցում</p>	<p>Ավագանու նիստերի առցանց հեռարձակումների հնարավորությամբ են ապահովվել ՀՀ Արարատի մարզի Վեդի, Արմավիրի մարզի Մեծամոր, Կոտայքի մարզի Ջրվեժ, Նոր Հաճն, Բյուրեղավան, Արագածոտնի մարզի Արագածավան, Ծաղկահովիտ, Ապարան և Շիրակի</p>	

			<p>առցանց</p> <p>հեռարձակելու հնարավորության ապահովում</p>	<p>մարզի Անի, Ախուրյան և Մարմաշեն (թվով 11) համայնքները:</p>	
			<p>3. միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում</p>	<p>2017 թվականի ընթացքում ձևավորված <b>34</b> միավորված համայնքներից <b>19</b>-ում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ)՝ միավորված բազմաբնակավայր համայնքի համար մշակված տարբերակը, որը ՏԻՄ-երին թույլ է տալիս մեկ միասնական տեղեկատվական միջավայրում ներառել միավորված համայնքի կենտրոնը և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերը՝ համայնքային վարչական ծառայությունների հիմնական մասը հավասարապես հասանելի դարձնելով համայնքի բոլոր բնակավայրերում: Ընդհանուր առմամբ՝ ՀԿՏՀ-ն ներդրված է հանրապետության <b>502</b> համայնքներից մոտ <b>400</b>-ում, իսկ դրա՝ միավորված համայնքի համար մշակված տարբերակը՝ միավորված <b>52</b> համայնքներից՝ <b>37</b>-ում: Ընթացքի մեջ են այս համակարգը մնացած <b>15</b> միավորված համայնքներում ներդնելու աշխատանքները, որոնց շրջանակներում արդեն</p>	

				<p>իրականացվել է անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի գնման գործընթացը:</p>	
			<p>4. համայնքային վարչական ծառայությունների հասանելիության և մատչելիության ընդլայնման ապահովում 10000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի արդիականացման միջոցով</p>	<p>Միավորված բազմաբնակավայր համայնքներից <b>10</b>-ում հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնց շնորհիվ համայնքապետարաններն հնարավորություն ունեն բնակչությանը համայնքային ծառայություններ մատուցել «մեկ պատուհան» սկզբունքով: Բացի այդ, արդիականացվել են նախկինում ստեղծված թվով <b>5</b> ՔՍԳ-ներ:</p> <p>Այդպիսով՝ ներկա դրությամբ հանրապետությունում գործում են ընդհանուր թվով <b>42</b> ՔՍԳ-ներ, որոնցից <b>33</b>-ը՝ միավորված բազմաբնակավայր համայնքներում:</p> <p>Համայնքային վարչական ծառայությունների որակի բարելավման նպատակով՝ 10000 կամ ավել բնակիչ ունեցող ավելի քան <b>40</b> համայնքների համացանցային կայքերի գլխավոր էջում զետեղվել է «Ծառայությունների հավաքածու» բաժինը, որը ներառում է համայնքապետարանի կողմից տրամադրվող ավելի քան <b>60</b> վարչական ծառայությունների տեղեկատվական քարտերը՝ ծառայության տրամադրման</p>	

				Ժամկետ, անհրաժեշտ փաստաթղթեր, ծառայություն և դիմաց գանձվող վճար և այլն:	
Հավելված N1 Կետ 225	Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում	1. համայնքների միավորման առաջին երեք փուլերում ներառված համայնքներում դասընթացների և քննարկումների անցկացում		2019 -2020թթ	
		2. հաղորդակցման գործողությունների պլանի մշակում, համայնքների միավորման նոր ծրագրերում ներառված համայնքներում պլանով նախատեսված միջոցառումների իրականացում			
		3. համայնքների միավորման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում			
Հավելված	Լիազորությունների	1. Տեղական		2019 -2022թթ	

	<p>ծ N1 Կետ 226</p>	<p>ապակենտրոնացում</p>	<p>ինքնակառավարման մարմինների լիազորությունների, ինչպես նաև ընտրված ոլորտներում կամ բնագավառներում դերերի ու պարտականությունների փոփոխման վերաբերյալ առաջարկությունների մշակում</p>		
			<p>2. լիազորությունների ապակենտրոնացման կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում</p>		